

ԲԱԺԱՆՈ՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուլկարիոյ համար
 Տարեկան 12 Ֆր.
 Վեցամսեայ 6 »
 Առաստանիսկի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Աւերիկայի համար
 Տարեկան 3 ֆր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԱՆՆԻՍԻԿ ՎՃՈՒՄԵԼԻ

Ստանդարտ սոյր առաջին
 հոնիսկի համար 40 սանթիմ
 և իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ և երեքին
 սանթիմ սակարկու համար
 20 ՕՊՊ զեղջ կըլլայ:

Պուլկարիոյ համար ձեռքի
 յ 15 ԱՆՆԻՍԻԿ յ

ՇԱՐՈՒԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒՄԻ ԶՈՐԵԲՈՒԹԻ ԻՒ ՇԱՐՈՒԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

Կրուսիսեֆ ես յնն սրուիր

Առաստանիսկի համար ձեռքի
 յ (20 ԱՆՆԻՍԻԿ յ)

ԳԱՍԱԼԻՔՆԵՐԸ

Հայութեան համար արտասահմանը բաց դաշտ մըն է, ուր ամէն կաշկանդումէ և ամէն հսկողութենէ զերծ, անիկա կրնայ իր մղելիք մահու և կեանքի աստիճաններէ անհրաժեշտ տարրերը պատրաստել մտքի կատարեալ հանգարտութեամբ, վրէժ խնդրութեան ազգած բովանդակ աննկուն կորովով: Մեր գլխուն իջած հարուածը այնքան բուռն է, որ անոր հակազդեցութիւնը, շուրին մակերեսին յարուցած անծայր վէտովէտունքուն նման, ապագայ սերունդներուն պիտի փոխանցուի մշտարժարձ պահելով վրէժի լափող ծարաւը:

Չը գիտեմ թէ կա՞յ հայ մը որ ամօթի շառագոյնանքը չզգայ երեսին վրայ, երբ օտարները մեր այնքան չարաչար կերպով կօտորուելուն պատճառներէն մէկը նկատեն սա դժբախտ պարագան թէ «հայը թուլամորթ ցեղ, զէնք կրելու անյարմար, թուլուց որ մորթեն զինքը առանց ամենափոքր ընդդիմութեան»: Արքան որ ալ, սակայն, այն այսպանանքը մեր ջիղերուն դայչի, անիկա չի դադարի ճշմարտութիւն մը ըլլալէ: Հայաստանի հայութիւնը, ապականուած բռնապետութեան մը անարգութիւն տակ, դարեւրու ընթացքին մէջ գրէթէ կօրուած էր զէն ի ձեռին կռուելու, իր պատիւն ու սեպհակաճնութիւնը արիւթիափք թշնամիին դէմ պաշտպանելու ցեղային յատկութիւնը: Հինցած ու շատ կրկնուած իրողութիւն մըն է որ շատ զինեալ հայեր իրենց զէնքերը ձգած փախած են փոխանակ դէմ դնելու թըշնամիին: Աւ Հայաստանի ժողովուրդը մեծագոյն մասամբ գրէթէ ոչխարի հլութեամբ թողուց որ մորթեն զինքը:

Անշուշտ չէր կրնար պահանջուիլ որ երկարօրէն բռնութեան տակ հեծող ազգ մը մէկէն ի մէկ քաջասիրտ ու ճարպիկ զէնք գործածող մը դարձար, բայց միևնոյն ազգին պատկանող անհասներէն

ալ կատարեալ իրաւամբ չի՞ պահանջուիլ որ, անցեալ ազէտներէն և անոնց շարժառիթներէն խրատուած, յարմար առիթը ներկայանալուն պէս ձեռք առնեն ինքնապաշտպանութեան անհրաժեշտ տարրերը, և բանակի մը կարգերը ձգող փախչող դատաւիթ զինուորի մը պժգանքը չա՞զգեր այն հայը որ, արտասահմանի ազատ հողին վրայ, կը մերժէ ձեռք առնել զէնքը որ իրեն կը տրուի անոր գործածութիւնը իրեն սորվեցնելու անգնահատելի ծառայութեան հետ մէկտեղ:

Եւ ասիկա յերիւրուած մը չէ, ամենատխուր իրողութիւն է:

Պուլկարիոյ մէջ ժամանակէ մը ի վեր կազմակերպութիւն մը կայ որ կը շանայ զինավարժութիւնը տարածել ժողովրդեան մէջ. ամէն մարդ, առանց ուղղի խտրութեան և առանց սեռէ զտնդութեան, կրնայ մասնակցիլ այդ կազմակերպութեան և «զէնք՝ շարժել սորվիլ»: Հայերն ալ, գաղթական թէ տեղացի, առանց սեռէ արգելքի կրնան օգտուիլ այս հիանալի առիթէն, և նոյնիսկ մասնաւորապէս ջերմ ընդունելութիւն կը ըլլայ իրենց: Արդ, կան մարդիկ որոնք կուզեն հրաժարիլ այդ տեսակ գործի մը մասնակցելէ՝ սա յոյժ յատկանշական առարկութիւններով:

— Զէնք շարժել սորվիլք որ պէս զի օտարը մեզի զինուոր առնէ:

Կամ թէ՛

— Կուզէք մեզի զէնք բռնել սորվեցնել որպէս զի Հայաստան զրկէք մեզի՝ կռուելու համար:

Սոսկալի եւ յուսահատական բան է ասիկայ. ապահովապէս, այն թշուառները որոնք վերոյիշեալ ողորմելի առարկութիւնները ըրած են, փախտական բեկորներն են ջարդուած, կողոպտուած ու քանդուած ընտանիքի մը: Այն կրակը, վրէժի անշէջ հրդեհը որ պիտի վառէր իրենց սրտին մէջ, մարեր լմնցեր է:

Դասալիքներ են անոնք ու իրենց նմանները, անարժան այն ազատութեան որուն համար անուշի կորուստներ տուինք և անվախճանօրէն պիտի տանք դեռ. եթէ զանիկայ ձեռք բերելու ամենէն էական պայմանները լրացնելու ոգին ու կորովը չունենանք:

Արտասահմանի ազատ երկնքին տակ իրեն մատուցուած զէնքը մերժող հայը անհունապէս աւելի վատ ու աւելի անգոսնելի արարած մըն է քան կռուի ատեն կռնակը դարձնելով խոյս տուող զինուորը:

Ե. Ս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ . 25 Ognusnu

(Շար. նախ. քիւն և Վերջ)

Թուրքիոյ հպատակ քրիստոնէայ ժողովուրդներու ամէն պատրիարքները միասին ընդունուեցան Սուլթանէն, Համրա նստած լսեց պատրիարքներէն ծայրագոյնին, յունաց էքզարխին շնորհաւորութիւնը կրօնականներու ամբողջ խմբին կողմէ: Խըպտիներու միամիտ պատրիարքը կը մօտենայ ատ պահուն Համրտի ոտքը համբուրելով ըստ արեւելեան կրօնական սովորութեան: Համրտ կրօնաւորի մը առաջ գալը տեսնելով կսկսի դողզգալ ու շտապով «իստէմէզ» «իստէմէզ» ընել: Ամէն կրօնապետները ու զերձներ ու նուէրներ տուին, իսկ հայոց գերերշնակ Օրման փաշան ուղերձը ծոցը խոթած ներկայացուց ուրիշ թուղթ մը որ փուշի պէս սար ու ձոր քիթը մտաւ: Այդ երջորդութիւնը հայ քաղաքական բանտարկեալներու ու արտարկեալներու ցանկն էր, շուրջ 1000 հոգի. ասոնց համար «շնորհ» ազատութիւն կը հայցուի: Առնելուն պէս Համրտ կախեր է իր հրէշ քիթը, թէեւ Օրման կըսէ որ իրեն յատկապէս շնորհակալութիւն է յայտներ իր նուէրին համար:

Հայոց բարձր շրջանակները չեն միայն որ բանտարկեալներու շնորհին համար յուսախար եղած ականջնին կախեցին: Նոյն վիճակին մէջ են նաեւ պուլկարները:

Պուլկարական նախարարութիւնը Սօֆիան պարպեց, հոս եկաւ իբր պատուիրակութիւն խոշոր թուով մը և ի վանչօվ էֆէնտին խնդիր տուաւ, շնորհ հայցեց Պուլկարիոյ իշխանին ու պատուիրակութեան անունով՝ թուրքիոյ մէջ բանտարկուած կամ արտարած քաղաքական շուրջ 600 անմեղ յանցաւորներու համար:

Պուլկար պատուիրակութեան անանկ աղուոր ընդունելութիւն մը բրին, սէրէմօններ, պատիւներ տուին (հաւատացէք որ վախէն), որ կարծեցին ու համոզուեցան ամէն ալ թէ՛ խընդրած շնորհին պէտք կը ըլլայ, անմեղները պիտի ազատին: Բայց ո՞վ դժբաղդութիւն—մինչեւ օրս ալ «շնորհ» չի կայ, Աւ ի վանչօվ էֆ. եւ իր ընկերները Չարիկրատէն մեկնեցան խի՛ստ կոտորած սիրտերով:

Հիմակ թուեք Համրտի ըրած անհուն շնորհները:

Ա. 75 բանտարկեալներ արձակուեցան: Ամէնքն ալ գողեր, ոճրագործներ, մարդասպաններ էին, որ իրենց պարտքին երկու երրորդ մասը լրացուցած ըլլալով, ազատեցան: Գողերն ու ոճրագործները կազատին, իսկ ժողովրդի բարիքը ցանկացող, յեղափոխական վեհ սիրտ մը կուրծքի մէջ կրող պաշտելի անձերը Մեծ-Աւազակէն գերագոյն աւազականց երկրին մէջ շղթաներու տակ կը հեծեն, 75 ոճրագործ ալ աւելցաւ Համրտի «հաւատարիմ» սրիկաներու թուին վրայ: Ե՛ն ես ու շէն մնաս, փատիշահ:

Բ. Ճոճուան և ուսուցիկ բառերով իրատէ մը ծանոյց մինչեւ 1880 եղած կալուածական հարկերու ապառիկներու ներուժը:

Ուրեմն ասկէ քսան տարի առաջ եղած կալուածական հարկի յետաձայն մասերը ներուած են: Եթէ մարդ մը 20 տարի չէ կըրցած վճարել իր պարտքը, ուրեմն չունի, այլ եւս անկարելի է անկէ գանձել: չկայէն բան մը կառնուի: Իսկ 1880էն աստին պիտի առնուին խիստ միջոցներով: Տեսա՞ք թէ որքա՞ն մեծ բարութիւն մըն է:

Շէն ու շէն մնաս, փառչահ: Գ. Թուրքիոյ մէջ հրատարակուող ամէն թերթերն ալ պիտի կրեն իրենց վրայ Սուլթաններու անկանոն ու անբարոյական վարչութեան ապացոյց գրոշմներ—բուլ մը: Աս բուլի եկամուտը հանրային եկամուտներէն մին է: Գոսացած, պոռնկացած լրագրութիւն մը ունինք հոս թուրքերէն, հայերէն, յունարէն, գաղիերէն, եւ այս լրագրութիւններու ամէն մէկ թիւը պիտի վճարէ հանրային պարտքի վարչութեան շահանք փարա: Տարեկան եկամուտը միայն լրագրիներու բուլիներէն շուրջ 4000 սակի կը հասնի: Հանրային պարտքը հանրային չէ, այլ Սուլթաններու անբարոյական ու ապուշ վարչութեան արգիւնք է: Բայց մարդկային պատմութեան օրէնքները աննորոգ կ'ընթացեն: Կը մնան էտպէս քաղաքացիական շնորհները: Գոզերը, աւազակները, մարդասպանները, ոճրագործները կ'աւատեն շքանշաններ, սակիներ ստացան... անմաս չի մնացին նաեւ պետութիւններու ներկայացուցիչները:

Արդ, Համիտ խոշոր իրատէնով մը աս բոլորը ջնջեց լրագրիներէն: Փառաբանութեան գովեստ չի մնաց որ չի շուայլէին

մեր մտքով ազգաստ՝ անբարոյականութիւնով հարուստ հայ կ'ընտրէ խմբագիրները: Բայց յանկարծ երեւաց որ ջուրը չի տեսած կօշիկներն հաներ են մեր Գեղեցիկները, Արքիարները և touti guanti. Իրատէն ըսած է «Չնչել բուլը թուրքերու մէջ հրատարակուող թերթերէն», բայց հայերուն թերթերը նորէն բուլով մնացին... Բացատրութիւն: Պոլսոյ հայերէն թերթերը թուրքերու մէջ չեն հրատարակուիր: Այս տեսակ սկներեւ անմասութիւն կ'հակասութիւն կարելի չէր վրան բաց թողուի, ասոր համար իրատէն մեկնուեցաւ սապէս. «միայն թուրք թերթերը» Բայց այն ատեն ալ ասպարէզ եկաւ «Ալեքսիս», «Ատամպուլ», «Ալեքսանտ հերալտ», «Մոնիթօռ Օտիանդալ» գալղիերէն և այլ լեզուով թերթեր, որոնք կը վստեշեն աս կամ ան գեոպանին պաշտպանութիւնը: Եւ ասոնք չըրկել այդ շնորհէն, անհնարին... Խնդիրը աս վիճակին է, ամէն թերթերն ազատ են բուլի բացի հայերէն և յունարէն թերթերը: Աս ալ շնորհք մըն է. «չունես ու չուն մնաս, փառչահ»: Ասոնք են Համիտին ըրած հասարակական շնորհները: Կը մնան էտպէս քաղաքացիական շնորհները: Գոզերը, աւազակները, մարդասպանները, ոճրագործները կ'աւատեն շքանշաններ, սակիներ ստացան... անմաս չի մնացին նաեւ պետութիւններու ներկայացուցիչները:

Տեղուս ուսական գեոպանին հրամանով՝ վանայ ուս. քօնսիւր գնացեր է Սպարան, որ ներկայ ըլլայ Համիտի զրկած քարաքար քովիսիոնի քննութիւններուն և տեղեկագրէ կառավարութիւններուն թէ՛ իսկական դէպքը և թէ՛ թրքական արդարագատութեան մէկ պատկերը: Դոյն ուսական կառավարութիւնը խարբերող նոր հիւպատոտութիւն մը կ'ստեղծէ, ուր մինչեւ այժմ՝ ուս հիւպատոտ չի կար:

ԲԱԺ

ՄԻՏԻԸ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ ՄԱՐԴ-

ԿԱՅԻՆ ՅԱՌԱՋԻԻՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Գ. Ծար. (նախորդ քիւն)

Կրօնական դաստիարակութիւնը սակայն, կրթական ուղղութիւններու մէջ ամէնէն քիչ այս պահանջքը լրացնողն է: Հաւատարիմ իր վերացական սկզբունքներուն, անիկայ կաշխատի ոչ թէ իր մեթոտները, իր նմարքները մարդկային բնութեան պատշաճեցնելու այլ մարդուն նոյն, իր առաքելները թերեւս լաւ ճանչցած են մարդը, բայց չեն ճանչցած մարդիկը: Հաւատարիմ իրենց բնագաւազական յայտնութեանց կարծած են թէ ամէն զգի, ամէն կ'ըմբռնի մարդիկը: Հնդկաստանցի ինչպէս Արարը, Յոյն ինչպէս Եփրատացիները, Պարսիկացիները ինչպէս Վարդը, Յոյն ինչպէս Եփրատացիները կ'աւատեն մարդը բացարձակապէս իրարու նման են, իբր թէ մէկ կողմապարի մը մէջ ձուլուած ըլլային: գերաշխարհիկ յղացումի մը համեմատ:

Բայց այսպէս չէ: Ժողովրդի մը կամ պատմական շրջանի մը բարոյական սարուածքը այնքան ան-

հունօրէն այլազան ու կատարելապէս որոշ է որքան կենդանական կամ բուսական ընտանիքի մը ֆիզիքական սարուածքը: Հետեւաբար պէտք է ամէն երկրի, ցեղի կամ միջավայրի պէտքերուն համեմատ կրթութիւն մը տալ մարդոց: Կրօնական դաստիարակութիւնը երանելի սուրբութեւ օրերէն մինչեւ այսօր զիտ նշանակեց մը իսկ չէ փոխած իր սկզբունքներէն, եւ այդ պատճառով հինգսմ է ու ամուլ ինչպէս դաստիարակուած:

Իբրեւ է թէ կրօնական դաստիարակութիւնը իսկապէս զոյուելիւն չունի մեր մէջ, բայց իր հետեւանքները չեն զարդիր զգալի ըլլալէ, քանի որ մէկ կողմէ ուսանողներու սուտար թիւ մը ունինք, որոնք օտար կրօնական հաստատութիւններու կ'աշակերտեն, եւ միւս կողմէ անքան կազմակերպուած ազգային վարժարաններ ալ չունինք: որոնք օտար ազգացու թիւները չեզոյացնեն: Ասոր համար մերթ ընդ մերթ հարկ կ'ըլլայ յիշեցնել անոնց վստակար կողմերը:

Բայց չի կարծուի թէ կրօնական դաստիարակութեան հակասակ խօսելով ուղղակի կրօնքի դէմ յարձակած կ'ըլլանք: Ինչքան կուզենք հասկնալ թէ կրօնական դաստիարակութիւնը խափանելով մաքին գերագոյն ազատութիւնը, կամքին ինքնածին գործունէութիւնը, մարտիկ ստոյգ մէջ հետաքրքրութեան, ստեղծումի աւանդ եռանդ, մեքենայ մը կը գործնէ զանոնք: որոնք կարող են հրամանի մը համեմատ շարժելու: Բայց երբէք անհատականութիւն չունին: Ասկէ զատ, ոչ ոք իրաւունք ունի ուսուցչի մը խղճին վրայ բռնանալու եւ անկէ պահանջելու այնքան ջիւղման անհոգութիւն, որքան ինքնու չունի իսկ կրօնքի պաշտօնեան: Արքան որ տարակոյսը եկեղեցական ու ծիսական հաստատութիւնները շրջանին մէջ կը յաճէր, առանց հասնելու մինչեւ կրօնքին ու բարոյականին հիմիրը, հասարակաց կրթութիւնը զիտ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (4)

ԽԱԽԱՐԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Առանց հետեւելու ներկայացման մանրամասնութեանց սովորները խաղին նիւթը, որ ինչպէս բուսեցաւ, առնուած էր հայու ժամանակակից կեանքէն: Գոյնոգութիւնը կը կատարուի թուրքերու կ'փաղաքը: Երիտասարդ մը Արսէն անունով բաւական զարգացած եւ քաղաքին պատուաւոր ընտանիքներէն մէկուն զաւակը, յեղափոխութեան անգրանիկ զինուորներէն մէկը կ'ըլլայ: Արսէն իր ոգեւորուած եւ սաք շունչով քաղաքին հայ երիտասարդութիւնը կը լեցունէ այդ զաղափարին վեհութիւնով: Հայերը, մեծ ու պղտիկ, ազատութեան գաղափարին փողփողուն լոյսէն չլացած, կը փաթթուին յեղափոխութեան եւ անոր կօչներն նիւթապէս եւ բարոյապէս: Կառավարութիւնը քնացած կը թուի, ոչ մէկ կասկած ոչ մէկ վախ

հայոց այդ եռանդը չի չափաւորեր եւ չի թունաւորեր: Արսէն նշանուած է քաղաքին էն հարուստ ընտանիքներէն մէկուն մէկ հարսի աղջկանը: Չարուհիին հետ, Արսէն կ'ըջանայ իր նշանածին միջոցով յեղափոխութեան կրթակը արծարծել իրական սեւին մէջ եւս: Քաղաքին մէջ ուրիշ հարուստ հայ մը Մեսրոպ աղա, հանրածանօթ իր կծծի բնաւորութեամբ, աղբուկ վախառութեամբը եւ կառավարութեան մօտ ալ աղբեցիկ իր սողացող քաղաքականութեամբը, աչք տնկած է Չարուհիի վրայ: Եւ միակ փափաքն է անպատճառ զանի իր աղուն հետ կարգել, այդպէս անոր հօրը ամբողջ կարողութեանը տիրանալու համար: Սակայն իր փայփայած գաղափարը անկարող է իրագործել, քանի որ մէջտեղ է Արսէնը, եւ կորոչէ ամէն գնով մէջտեղէն վերցնել զանի: Սասունի գէպքերը կուզան ամբողջ թուրքիան վերիվայր զել: Ամէն տեղ խուզարկութիւններ կը կատարուին եւ յեղափոխականներ կը փնտուռուին: Սարսափը կը տիրէ նաեւ Կ. քաղաքին մէջն ալ, քաղաքացիները ամբողջ դող ելած ձեռնթափ կ'ըլլան յեղափոխութեանէն, եւ Արսէնի բոլոր ջանքը զանոնք իրար բերելով պատրաստ ուժ մը կազմելու ամէն պատահականութեանց դէմ, պարսպը կերթայ:

Մեսրոպ աղա որ միշտ միջոց կը փնտուռ Արսէնը մէջտեղէն վերցնելու եւ տեղեկութիւն ունի անոր յեղափոխական գործունէութեան վրայ, կառավարութեան խտրութիւններն եւ խուզարկութիւնները պատեհ առիթ սեպելով, անստորագիր նամակով մը Արսէնը կը մատնէ իրբեւ վտանգաւոր յեղափոխական մը: Արսէն անմիջապէս կը ձերբակալուի, տունը կը խուզարկեն բայց կասկածելի բան չեն գտներ: Արսէնի ձերբակալութիւնը ալ աւելի սարսփաւոր կընէ հայերը, որոնք նմանօրինակ վտանգի մը մէջ չիյնալու համար կը փութան հաւատարմութեան հանրագիր մը ստորագրել: Հովը փոխուած է, երէկի թունդ ու պոտոտախօս յեղափոխականները, մանաւանդ խոհեմ, զգուշաւոր փորձառուները հիմա ջերմ թրքամոլներ են, հակաչեղափոխականներ գործած են: Արսէնի ինչպէս նաեւ Չարուհիի ընտանիքը կը գիմեն Մեսրոպ աղայի, որպէս զի իր ազգացութեամբը կառավարութեան մօտ միջամտէ, խնդիրը շատ չի տարածուի, և զային խոստանալով մեղկակ գուժար մը: Մեսրոպ աղա կը խոստանայ ձեռքէն եկածը ընելու, եւ իբրք կառավարութեան մօտ ամէն հնարք կը

բանեցնէ որպէս զի Արսէնը չարձակուի եւ նոյնիսկ քաղաքին մէջ լուր կը տարածէ թէ Արսէն խոստովանած է իր յանցանքը եւ իր բոլոր ընկերները բերան տուած է: Չարուհիի ընտանիքը դող կ'ըլլայ, վախնալով որ իրենց զխուսն ալ փորձանք մը կուզայ եւ կը գիմէ Մեսրոպ աղային որ գոնէ ջանայ գիրքներ փրկել Մեսրոպ աղա կը համոզէ զանոնք որ եթէ կուզեն անպատճառ պաղպաղ չարիքէ մը ազատիլ, պէտք է Արսէնի պէս վտանգաւոր անձի մը հետ ու եւ կապ չունենան: Չարուհիի ընտանիքը սարսափի մէջ կը կատարեն այս խրատը եւ կը ընեն նշանը Գիշ ատենէն Մեսրոպ աղա կը յաջողի իր աղուն նշանել Չարուհիին: Մեսրոպ աղա յաջողած է իր ծրարքին մէջ, Արսէն բանտն է, բայց կրնայ վաղը անպարտ արձակուիլ: ուստի կուզէ անպատճառ ջախջախիչ փաստ մը ձեռք ձգել, բուն մէջ կը յաջողի: Լ. Գանի որ Չարուհին իր յարմարն է, իրաւունք կը ստանայ անոր բոլոր գազանիքներուն թափանցելու, եւ քովի թուրքերը կառնէ: Եւ անոնցմէ քաղած տեղեկութիւններուն վրայ կրթիւնելով երկրորդ անստորագիր նամակ մը կը գրէ որուն հետեւանքը կ'ըլլայ Արսէնի ցմահ բերդարկութիւնը: Բուն արդէն այդ անստորագիր

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Վերջերս պատրիարքարան կարգ մը գիրքեր հասած են, որոնց մէջ Խարբերքի առաջնորդի նկատմամբ գանգաւաներ կը տեղան, մասնաւորապէս տեղւոյն որբանոցին մատակարարութեան համար յոյց տուած թուլութեան մասին: Բագրատունի վարդապետ որբանոցին անունով պատրիարքարանին զրկած գրամներն ալ իրենց նպատակին չէ գործածած: Պատրիարքարանը որոշեր է ձեռնհաս վարդապետ մը զրկել իբր օգնական:

— Օրմանեան պատրիարք անցեալ կիրակի օր Մայր-Եկեղեցւոյ մէջ Գրիգոր Զանչեանցի յիշատակին հոգեհանգիստ կատարելով քարոզ մըն ալ խօսեր է: Օրմանեան պատրիարք իր քարոզին մէջ ըսեր է թէ ազգային բոլոր իշխանութիւններն ու պաշտօններն իրենց բոլոր պարտականութիւնը կը ճանչնան ու խղճի մօտ կը կատարեն. ու միայն հայ մամուլն է որ անհեռառես և լոկ իր շահերուն համար ամէնքան ուրացող ընթացք մը բռնած է: Կերեւայ թէ նոյն իսկ Պոլսական թոյլ մամուլին երբեմն յայտնած քննադատականները իր չիզերուն դպած են և զինքը անհանգիստ կը թողուն:

— Տիրապետելէն «Սուրհանդակ» կը գրեն թէ տեղւոյն որբանոցին տնօրէնին թուլութեան պատճառաւ այդ հաստատութեան մէջ անպատշաճ դէպքեր տեղի ունեցած են, և ութը տղաքներ արտաքսուած:

Ս. Պատրիարքը որ աչքը լիւր ու ծալլոպատիկ քամուած է իր տեղը, ապահովաբար շատ գոհ չի պիտի մնայ «Սուրհանդակ» յայտնողին ալ, և առթիւն երկաշաղկապին պէս անէժք մըն ալ պիտի տեղայ հայ մամուլին գրելուն:

— Կարնոյ հայ հովիտականաց առաջնորդ Կարապետ եպիս. Բուլուրեան 6—7 ափս առաջ Պոլսէն Եւրոպա ուղեւորուած ըլլալով, Անգլիոյ մէջ անյայտ եղեր է: Պանդոկապետը ոստիկանութեան կիմացնէ, որ խուզարկութիւն կատարելէ յետոյ կը հեռագրէ Պոլիս, Տրապիզոն, Կարին որպէս զի ուր գտնուիլը հասկնայ: Ոստիկանութիւնը եպիսկոպոսին բոլոր գոյքերը կը գրաւէ: Պայուսակին մէջէն 17,500 Քր. ելեր է զոր եպիսկոպոսը հաւաքած է եղեր իր վիճակին եկեղեցին ու գարոցը շինելու համար:

— Բաղէշի առաջնորդ Եղիշէ Ծ. Վ. Չիլիկիւրեան, դժգոհ մնալով իրեն իբր օգնական զրկուած եզրաս վարդապետէն, որ Մայր-Եկեղեցիին մէջ ռազմու կարգալէ զատ ոչինչ գիտէ եղեր, ըն-

դարձակ նամակով մը իր դժգոհութիւնը յայտնած և ճամբայ ելած է գէպի Պոլիս:

— Սօֆիայի Ազգ. վարժարանի ուսուցչուհին մեզ կը գանգատի ամիսներէ ի վեր իր յետամնաց ամականները ստացած չըլլուն և կը յայտնէ թէ գատարանի գիմած է. որպէս զի կարենայ իր պահանջը գանձել թաղական խորհրդէն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա.

Վանի շրջակաները քիւրա աւազակախումբերու և թուրք զօրքերու միջև ընդհարում մը տեղի ունեցեր է: Երկու կողմէն կան վիրասորուածներ և մեռեալներ. մեռածներուն մէջ է նաեւ քիւրահրուս գլխատուր շէյխը:

— Կ. Պոլսէն «Կազէթ Ֆրանքֆորթի» կը հեռագրուի թէ Հայֆայի մէջ (Սիւրիա) 80էն աւելի Սիւրիացիներ թուրք պահակազօրքերուն վրայ յարձակեր են, որովհետեւ հոն զանուոյ գերմանացիները օրինաւորապէս տէր դարձեր են հոյերուն:

Պահակազօրքը ստիպուած է ետ քաշուիլ. բայց գերմանացիք ետ մղած են Սիւրիացիները:

Երկու կողմէն ծանրապէս վիրաւորուածներ կան. Պոլսոյ գերմանիոյ դեսպանին գիմուսին վրայ՝ Դուրը հրաման զրկած է խիստ քննութիւն մը բանալ: Քսան Սիւրիացիներ ձերբակալուած են:

Չ Ր Ն Ա Ս Ս Ա Ն

Լի-Հունկ Զանկ և իշխան Թունկ որ շինաց կայսեր կողմէն լիազօր պառիսակ կարգուած են խաղաղութեան բանակցութիւնները կատարելու համար, իրենց այս պաշտօնը ծանուցած են տէրութեանց:

— «Կոստանի Նիւ-Եօրթի թղթակիցը կը հաւատարէ թէ՛ ռուս կառավարութիւնը պիտի չեղի համաձայնութեան գծէն և Բէքիւի ու Բէ. Չիլիկի նահանգին մէջ ունեցած զօրքերը ետ պիտի քաշէ, եթէ Բէքիւր պարպելուն ստաշարկը գէշ ընդունելութիւն գտնէ միւս տէրութեանց քով:

— Բեթերսպուրկէն մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ վերապահութեամբ թէ՛ Ֆրանսական կառավարութիւնը համամիտ գրտնուեր է ռուս կառավարութեան հետ Ֆրանսական զօրքերը Բէքիւն քաշելու և Թիէն-Չիւ մեկնելու համար: Նոյն հաւանութիւնը արամադիր է նաեւ տայ ճարտական կառավարութիւնը, պայմանաւ որ գունդ մը զօրք

պիտի թողու իր գեսպանատունը պաշտպանելու համար:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիական շատ լրագրիւններ կը հազորդեն թէ՛ լորա Ռոպէրտսի վերադարձը որոշուած է հոկտեմբեր 1ին: Լորա Ռոպէրտս Անգլիա հասնելուն պէս բանակին ընդհանուր հրամանատարութիւնը պիտի ստանձնէ: Սակայն կառավարութեան կողմէ կը հերքուի այս լուրը:

— Պօէրնեբուն անկախութեան համար կազմուած մասնախումբը որոշած է Բրիւկէր և Շթայն նախագահներուն հետեւալ հեռագիրն ուղղել իրենց ծննդեան տարեդարձին առթիւ:

«Ի պատիւ ձեր ծննդեան տարեդարձին՝ պարտ անձին կը համարինք մեր համակրութիւններն ու սրտաբուխ մաղթանքները արտայայտել ձեզ՝ զսեմ գործին համար, որուն ձեռնարկեցիք և որ քաղաքակրթութեան պատմութեան մէջ ստալին տեղը պիտի գրաւէ: Ըսէք ձեր յոյսերը թէ՛ արարատ աշխարհ ջերմապէս կը ծափահարէ իրենց ջանքը և հաստատապէս համոզուած է որ իրենց գաղութը վերջնական յաջողութեամբ պիտի պսակուի:

— Լոնտոնէն կը հեռագրեն թէ Քրիւկէր և Շթայն նախագահները Տէլավոտի ճամբով փախեր են:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Իտալական օստիկանութիւնը կը հազորդէ վատիկանի թէ՛ Ամերիկայէն ընդունած տեղեկութեանց համաձայն, Պապին դէմ անիշխանական դաւադրութիւն մը սարքուած է:

Այս լուրին վրայ վատիկանի պաշտօնները ամենախիստ միջոցներ ձեռք պիտի առնեն Պապը պաշտպանելու համար նորեկ ուխտաւորներու ընդունելութեան միջոցին, որ տեղի պիտի ունենայ մօտերս:

— Ֆերտինանա իշխանը որ ժամանակէ մը ի վեր արտասահման կը գտնուէր, փութով Սօֆիա վերադարձած է:

— Մերպիոյ նորապսակ արքայական ամուսին երկրին ներսերը կատարելիք ճամբորդութիւնը յետաձգուցաւ, թողու հոյն յղի ըլլալուն պատճառաւ:

— Աստրիական խորհրդարանը լուծուած է կայսեր հրամանով: Նոր ընտրութիւնները չուսով պիտի կատարուին:

— Կլաուովի մէջ ժամտախորհեռու հետզհետէ կը սաստկանայ. ծագած օրէն մինչեւ անցեալ չորեքշաբթի 17 գէպը պատահած է, և 103 անձեր ալ հսկողութեան տակ կը մնան իբրեւ վարակուածներ:

Թ Ա Տ Ր Ո Ն

Գալ հինգշաբթի գիշեր ժամը 9ին Հաճի-Բանաքօ, ամառային թատրոն Պօրխի մէջ արտակարգ ներկայացում մը կայ: Վառիթէթէ խմբին կողմէն ի նպաստ խմբին Ա. դերասաններէն Սաւոյրօ և Եօրկիի:

Պիտի ներկայացուին անմահ ճէքսրի «Ռոմէօ Ժիլիէթ» երկակայական եղբերգութիւն 6 արարուած, 12 պատկերով:

«Ա.Ֆրիքսանա» անուն ծիծաղաշարժ կատակերգութիւն մը 3 արար և մէջընդմէջ Էրգիլ ու պարեր:

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐԿ»

(Տպագրական տառերու)
Կարծր մետաղ . Ողիղ կարգ
Հաւասար քարձորաքիւն
Ամէն լիզուէ տպագրական տառեր
և զանազան՝ գոհացուցիչ գներով.
Հասցէ՝
Fonderie typographique, Gutenberg,
Sophia, Rue Graff Ignatieff № 3,
8—25

Յ. Կ. ԲԱՍՄԱՊԵՍՅԱՆ
Բանասեր
Այս եռամսեայ հանդէսին Բ հատորի Ա. պրակը հրատարակուած է: Բանասերի տարեկան գինն է 20 Ֆրանք. մէկ գիրքը 6 Ֆրանք.
Հասցէ՝
Basmadjian
112 Bd Rochecouart Paris

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ
Պատիւ ունիմ ծանուցանել յարգալից յաճախորդներուս, որ դպրոցական նոր շրջանին համար, ծանօթ հեղինակներէ, մանկավարժական բոլորովին նոր գրութիւններով պատրաստուած դպրոցական գրքեր բերելու լուծուած և: Մեծաքանակ գնումներու գոհացուցիչ զեղչով եւ է յանձնարարութիւն անգործադրելի եւ անպատասխան կը մնայ եթէ կանխիկ դրամով ապսպրուած չըլլայ:
Գրատանս հետ հաշիւ ունեցողներէ կը ինքնուր իր փութան ժամ առաջ կարգադրել:
Գնում եւ վճարուած ամէն տեսակ նամակագրութիւններու:
Հասցէ՝
A. Zarbhanelian Librairie
Varna (Bulgarie)

Կը տպագրուին ամէն լիզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահապաշտ:
Գիները յոյժ գլուրամատչելի:
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:
ԱՆՆԶՆՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒՍՏՈՒԿ
Печатница Хр. Н. Войниковъ—Варна